ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/43

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.08.2017թ. թիվ 03/26-3/15475-17 գրությամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 23.08.2017թ. թիվ 1.1/13.1/1692-17 գրության հիման վրա, 24.08.2017թ. թիվ 03/26-3/15475-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 24.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1172340]-17 գրությամբ՝ նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով, դիմել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին, սակայն վերջինս Խորհրդին չի ներկայացրել իր դիրքորոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 29.08.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ տվյալ գործով առկա է բողոք և միջնորդել է Խորհրդին՝ կասեցնելու նիստը, մինչ բողոքի վերաբերյալ որոշում կայացվելը:

Խորհուրդը բավարարել է Ընկերության միջնորդությունը:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն 28.08.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել էր հետևյալը.

«ՀՀ Կա քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը հայտարարել է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել վերանորոգման աշխատանքների կատարման պայմանագիր:

«ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-02/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

«ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-02/17» ծածկագրով գնանշման հարցման միջոցով վերանորոգման աշխատանքների գնահատող հանձնաժողովի նիստի 19.07.2017թ. թիվ 3-րդ արձանագրությամբ կայացված որոշմամբ 1-ին և 2-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից է ճանաչվել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն 31.07.2017թ. ստացել է պայմանագիր կնքելու մասին շնորհում /պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը/ որը 02.08.2017թ. հաստատվել /ընդունվել/ է վերջինիս կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել է պայմանագիրը: Պայմանագիրը և պայմանագրի ապահովումը 11.08.2017թ. «Հայփոստ»-ի միջոցով ուղարկել է պատվիրատուին: Սակայն Պատվիրատուի կողմից արձագանք չստանալով՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ստորագրված պայմանագիրը, պայմանագիրը ապահովման հետ միասին 17.08.2017թ. մուտք է արել նաև ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն:

Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ օրենսդրական, գերատեսչական կամ տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ կամ անհատական իրավական ակտերի վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:
- 2-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակրպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն փաստաթղթերը /պայմանագիրը, պայմանագրի ապահովման հետ միասին/ 11.08.2017թ. ուղարկել է նաև «Հայփոստ»-ի միջոցով, ինչը վերոնշյալ հոդվածի բովանդակության համաձայն՝ համարվում է Կապալառուի կողմից իր պարտավորությունը ժամանակին և պատշաճ կատարած /փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված ժամկետը պահպանած/:

Վերոնշյալ հոդվածի 2-րդ մասում հստակ սահմանված է, որ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված: Այստեղ իրավական ակտերի մասին օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասով կարևորվում է, փաստաթղթերի տրման պահը, այսինքն՝ այն որ համապատասխան փաստաթղթերը տրված լինեն մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը, այլ ոչ թե համապատասխան փաստաթղթերը հասցեատիրոջ հասնելու պահը: Ուստի սույն դեպքում, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն 11.08.2017թ. փաստաթղթերը հանձնելով կապի կազմակերպությանը, վերջինս իր պարտավորությունները կատարել է պատշաճ: Օրենքի վերոնշյալ հոդվածը չի կարող մեկնաբանվել այլ կերպ, և չի կարող հայտնվել այնպիսի կարծիք թե քանի, որ փաստաթղթերը կարող էին հասցեատիրոջը հասցնել հաջորդ օրը ապա Հայցվորը համարվում է պարտավորությունը պատշաճ չկատարած, օրենքի այսպիսի մեկնաբանությունը կհակասի նույն՝ Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասին:

Իրավական ակտերի 86-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Պատվիրատուն, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն պատշաճ կատարել է իր պարտավորությունները գրություն է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ կարեն Թմազյանին նշելով, որ Ձեզ ենք ներկայացնում 04.07.2017թ. հրապարակված «ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-02/17» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հաղթող ճանաչված «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հաղթող ճանաչված մասնակիցը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ քաղաքացիական

ավիացիայի գլխավոր վարչության 23.08.2017թ. թիվ 1.1/13.1/1692-17 գրության հիման վրա, 24.08.2017թ. թիվ 03/26-3/15475-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում (այսուհետ՝ նաև Խորհուրդ) նախաձեռնել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Մինչդեռ՝ եթե Պատվիրատուն հաշվի առներ, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն պարտավորությունները կատարել է պատշաճ, կհանգեր այլ եզրահանգման:

Այդ ամենի արդյունքում խախտվել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի իրավունքները:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. փոփոխել ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. պարտավորեցնել ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը կայացնել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. <u>ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.08.2017թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությամբ հայտնել է, որ 04.07.2017թ. հրապարակված՝ «ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-02/17» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հաղթող ճանաչված «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, այն է՝ հաղթող ճանաչված մասնակիցը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 29.08.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը:

Պատվիրատուն ԳԲԽ-ԷՍ-2017/34 բողոքի շրջանակներում 06.09.2017թ. թիվ 40222-17 գրությամբ ԳԲԽ-ԷՍ-2017/34 բողոքը քննող Խորհրդին է ներկայացրել իր դիրքորոշումը, որով հայտնել էր հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից 04.07.2017թ. հրապարակված ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-02/17 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած և 19.07.2017թ. նիստի թիվ 3-րդ արձանագրությամբ հաղթող ճանաչված «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին 31.07.2017թ. ուղարկվել է պայմանագրի նախագիծ: «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից կնքված և ստորագրված պայմանագիրը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն մուտք է արվել 17.08.2017թ.: Այնինչ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացներ կնքված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, որը լրացել է 14.08.2017թ.:

Միաժամանակ հայտնում ենք, որ 30.08.2017թ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն է մուտք եղել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից փոստի միջոցով ներկայացված պայմանագիրը:

Տեղեկացնում ենք նաև, որ Պատվիրատուն կսպասի Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդի որոշմանը»:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/43 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/43 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-02/17»

ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով ճանաչել է հաղթող մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.08.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետը, այն է՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, մերժել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը:

4. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2017/43 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված Խորհրդի 29.08.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ տվյալ գործով առկա է բողոք և միջնորդել է Խորհրդին՝ կասեցնելու նիստը, մինչ բողոքի վերաբերյալ որոշում կայացվելը: Խորհուրդը բավարարել է Ընկերության միջնորդությունը:

5. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ԳԲԽ-ԷՍ-2017/34 բողոքը քննող Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 31.07.2017թ. ստացել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որը 02.08.2017թ. ընդունվել է Ընկերության կողմից: Ընկերությունը պայմանագիրը կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել է պայմանագիրը, և պայմանագիրն ու պայմանագրի ապահովումը 11.08.2017թ. «Հայփոստ»-ի միջոցով ուղարկել է պատվիրատուին: Սակայն Պատվիրատուի կողմից արձագանք չստանալով՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը փաստաթղթային եղանակով 17.08.2017թ. մուտք է արել նաև ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն: Սակայն, Պատվիրատուն՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում ստորագրել է պայմանագիրը, և պայմանագիրն ու պայմանագրի ապահովումը

11.08.2017թ. «Հայփոստ»-ի միջոցով ուղարկել է պատվիրատուին, գրություն է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ տեղեկացնելով, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիրը կնքելուց:

6. ԳԲԽ-ԷՍ-2017/34 բողոքը քննող Խորհուրդը ԳԲԽ-ԷՍ-2017/34 որոշմամբ արձանագրել է, որ բողոքի քննության նպատակով 01.09.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին 31.07.2017թ. ուղարկվել է պայմանագրի նախագիծը, որը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 14.08.2017թ., պետք է կնքվեր և հայտի ապահովման հետ միասին ներկայացվեր Պատվիրատուին, սակայն Ընկերությունը պայմանագրի թղթային տարբերակը ներկայացրել է 17.08.2017թ.:

Միաժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև, որ ներկայացված պայմանագիրը ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն փոստի միջոցով մուտք է եղել 30.08.2017թ.:

7. ԳԲԽ-ԷՍ-2017/34 բողոքը քննող Խորհուրդը ԳԲԽ-ԷՍ-2017/34 որոշմամբ արձանագրել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ընթացակարգի սահմանված ժամկետում ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը 11.08.2017թ. հանձնել է «Հայփոստ» կապի ծառայությանը՝ վերջինիս միջոցով Պատվիրատուին ուղարկելու նպատակով:

8. Խորհուրդը ԳԲԽ-ԷՍ-2017/34 որոշմամբ բավարարել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 28.08.2017թ. բողոքը, գտնելով է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու արդյունքում, խախտվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 36-րդ հոդվածի 3-րդ մասերով, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 9.5 կետով սահմանված պահանջները:

5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.08.2017թ. թիվ 03/26-3/15475-17 գրությունը, ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 23.08.2017թ. թիվ 1.1/13.1/1692-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, ԳԲԽ-ԷՍ-2017/34 բողոքով առկա նյութերը և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 15.09.2017թ. կայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/34 որոշումը, հայտնում է հետևյալը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝

• 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրական, գերատեսչական կամ տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ կամ անհատական իրավական ակտերի վրա, եթե նույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

• 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե ժամկետ է սահմանվել որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիրը կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:***

Ընթացակարգի հրավերի 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր: Ընդ որում, ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝***

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպես, ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-02/17» ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով ճանաչել է հաղթող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.08.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետը, այն է՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, մերժել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն 28.08.2017թ. ԳԲԽ-ԷՍ-2017/34 բողոքը քննող Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 31.07.2017թ. ստացել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որը 02.08.2017թ. ընդունվել է Ընկերության կողմից: Ընկերությունը պայմանագիրը կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել է պայմանագիրը, և պայմանագիրն ու պայմանագրի ապահովումը 11.08.2017թ. «Հայփոստ»-ի միջոցով ուղարկել է Պատվիրատուին: Սակայն Պատվիրատուի կողմից արձագանք չստանալով՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը փաստաթղթային եղանակով 17.08.2017թ. մուտք է արել նաև ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն: Պատվիրատուն, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում ստորագրել է

պայմանագիրը, և պայմանագիրն ու պայմանագրի ապահովումը 11.08.2017թ. «Հայփոստ»-ի միջոցով ուղարկել է Պատվիրատուին, գրություն է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ տեղեկացնելով, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիրը կնքելուց:

Խորհուրդը ԳԲԽ-ԷՍ-2017/34 որոշմամբ արձանագրել է, որ ԳԲԽ-ԷՍ-2017/34 բողոքի քննության նպատակով 01.09.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին 31.07.2017թ. ուղարկվել է պայմանագրի նախագիծը, որը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 14.08.2017թ., պետք է կնքվեր և հայտի ապահովման հետ միասին ներկայացվեր Պատվիրատուին, սակայն Ընկերությունը պայմանագրի թղթային տարբերակը ներկայացրել է 17.08.2017թ.:

Միաժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև, որ ներկայացված պայմանագիրը ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն փոստի միջոցով մուտք է եղել 30.08.2017թ.:

Խորհուրդը ԳԲԽ-ԷՍ-2017/34 որոշմամբ արձանագրել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ընթացակարգի սահմանված ժամկետում ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը 11.08.2017թ. հանձնել է «Հայփոստ» կապի ծառայությանը՝ վերջինիս միջոցով Պատվիրատուին ուղարկելու նպատակով:

Խորհուրդը ԳԲԽ-ԷՍ-2017/34 որոշմամբ բավարարել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 28.08.2017թ. բողոքը, այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու արդյունքում, խախտվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 36-րդ հոդվածի 3-րդ մասերով, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 9.5 կետով սահմանված պահանջները:

Այսպիսով, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:***

Ամփոփելով վերը նշված փաստերը և գործով առկա փաստական հանգամանքները՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը 11.08.2017թ. հանձնել է «Հայփոստ» կապի ծառայությանը՝ վերջինիս միջոցով Պատվիրատուին ուղարկելու նպատակով, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին սույն հիմքով Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 24.08.2017թ. թիվ 03/26-3/15475-17 գրությունով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06406394) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ